

2427

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՑԱՐԻՑԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Նյութեր Մանկավարժական ինստիտուտի
հետախոյզների համար)

9(47)
7-17

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԳՆՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1940

30 MAY 2011

ՀՍՍՌ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


9(47)
7-17

24 JAN 2006

Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՑԱՐԻՑԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Նյութեր Մանկավարժական ինստիտուտի
հեռակայանների համար)



ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1940

44299

ՅԱՐԻՑԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ սեփույուցիան նոր դարագլուխ բաց արեց մարդկության պատմության մեջ: Կապիտալիստական աշխարհն իրեն դեմ առ դեմ տեսավ մի նոր, իր կարգերին ու սկզբունքներին տրամագծորեն հակառակ սիստեմ: Այդ իսկ պատճառով կոնտրոսեփույուցիոն բոլոր ուժերը—կապիտալիստները, սպիտակ-զվարդիականները, կուլակությունը—միացյալ ուժերով գրոհի անցան երիտասարդ Սովետական իշխանությունը խեղդելու համար: Այդ շրջանը Լենինը բնորոշեց, որպես անցում՝ «խմպերիալիզմի սպասողական գիրքի ժամանակ առևանգված սեփույուցիայի պրոպագանդիստական-ազդեցիկ գործունեության դարաշրջանից դեպի իմպերիալիզմի հարձակողական գործողություններն ընդդեմ Սովետական իշխանության...» (Լենին, հատ. XXII, էջ 392):

Հոկտեմբերյան Սոցիալիստական սեփույուցիայի հաղթանակը սեփույուցիոն հուժկու վերելք ստեղծեց նաև կապիտալիստական մյուս երկրներում, այն է՝ Շվեյցարիայում, Բուլղարիայում, Սերբիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Շոտլանդիայում և այլն: Եվ, ինչպես ընկեր Լենինն էր գրում՝ «Բուլղերիզմը դարձավ համաշխարհային պրոլետարիատի թեորիան ու տակտիկան» (Լենին, հատ. XXIII, էջ 230):

Միջազգային սոցիալիստական սեփույուցիոն շարժումների առկայությունը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ սեփույուցիայի հաղթանակը մեր երկրում, ստիպեցին միջազգային բուրժուազիային արշավանքներ նախապատրաստելու մեր երկրի վրա և ոչնչացնելու պրոլետարական սեփույուցիայի միակ օջախը հանդիսացող Սովետական իշխանությունը:

Իմպերիալիստական գերատիչների կատալի արշավանքները մեր դեմ սկսվեցին մասնավորապես իմպերիալիստական առաջին

Госуд. ордена Ленина
Библиотека СССР
им. В. И. Ленина

11722
48.
3328

Классификация
Гос. Библиотека
ЗУУП-Арм.ССР
И. М. А. Мясоедова

20837-59

Խմբագիր՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վ.Ֆ. 2218. պատվեր 351, տիրած 1500.
Հանձնված է արտագրության 2 հոկտեմբերի 1940 թ.
Ստորագրված է տպագրության 23 հոկտեմբերի 1940 թ.

պատերազմի վերջին, չնայած դեռ պատերազմից առաջ անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները գաղտնի դաշինք էին կնքել Ռուսաստանն իրենց մեջ բաժանելու համար:

Ճիշտ է, Անտանտի արշավանքներն Ուկրաինայում և Արևմուտ սկսվում են 1918 թ. նոյեմբերին, բայց այդ ինտերվենցիայի նախագիծը մշակված էր դեռ շատ առաջ: 1917 թ. դեկտեմբերի 23-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև գաղտնի դաշինք էր կնքված Ռուսաստանի նկատմամբ «ազդեցությունների սֆերաներ» ստեղծելու համար:

Ըստ այդ գաշինքի՝ «ազդեցությունների սֆերաները», այսինքն Ռուսաստանի բաժանման գիծը պետք է անցնեի Դարզանելից դեպի հյուսիս, Կերչի նեղուցով դեպի Դոնի գետաբերանը և այնտեղից, Դոնի հոսանքով՝ դեպի Ցարիցին: Այդ գծից դեպի արևմուտք՝ Դոնի, Կրիվորոժի ավազանները, Ուկրաինան, Արևմը և Բեսարաբիան պետք է անցնեին ֆրանսիական իմպերիալիստների «ազդեցության» տակ, իսկ Դոնի արեւելյան շրջանները, Կուբանը, Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Մերձկասպյան շրջանները՝ Անգլիայի «ազդեցության» տակ:

Այդ պլանը, ինչպես պարզ երևում է, հիմնականում նպատակ ուներ տապալել և մասնատել Սովետական իշխանությունը: Սակայն իմպերիալիստական պատերազմի ընթացքում այդ պլանի իրագործումը կապված էր ծայրահեղ դժվարությունների հետ: Այդ շրջանում Անտանտի արշավանքները Սովետների երկրի վրա տակավին խիստ սահմանափակ էին: Անտանտը դեռ չուներ ոչ ազատ բանակ, ոչ հարմար կոմունիկացիոն ճանապարհներ, իսկ նեղուցները և Սեվ ծովը գտնվում էին Գերմանիայի ձեռքում:

Բայց երբ առաջին իմպերիալիստական պատերազմը վերջացավ Անտանտի հաղթանակով, երբ անգլոֆրանսիական իմպերիալիստներն իրենց կամքը թեղադրեցին Գերմանիային, երբ գերմանական ժողովուրդը զրվեց սարկական ծանր կացության մեջ, Անտանտը ծավալուն արշավանքներ ձեռնարկեց Սովետական իշխանության դեմ:

Ընկեր Լենինը Համառուսաստանյան Կենտգործկոմի միացյալ նիստում 1918 թ. դեկտեմբերի 22-ին ունեցած իր ելույթում այսպես ձևակերպեց վերահաս վտանգը.

«Արդեն,—ասում էր նա,—տուկա չեն երկու, մեկը մյուսին լավոր, թուլացնող և զրեթե հավասարապես ուժեղ իմպերիալիստական գիշատիչների խմբերը: Մյուս է հազթողների մեկ խմբակ, անգլոֆրանսիական իմպերիալիստների խմբակը. նա պատրաստվում է ամբողջ աշխարհը բաժանել կապիտալիստներին միջև. նա իրեն խնդիր է գնում, ինչ էլ որ լինի, տապալել սովետական իշխանությունը Ռուսաստանում և այդ իշխանությունը փոխարինել բուրժուականով. նա պատրաստվում է այժմ Ռուսաստանի վրա հարձակվել հարավից, որինակ՝ Դարդանելի ու Սե ծովի վրայով կամ Բուլղարիայի և Ռումինիայի վրայով...» (Լենին, հատ. XXIII, էջ 240):

«...մինք,—ասում էր Վլադիմիր Իլիչը,—երբեք չենք եղել ազելի վտանգավոր զրություն մեջ, ինչպես հիժա» (Լենին, հատ. XXIII, էջ 228):

Ինչպես հայտնի է, Անտանտը Սովետական իշխանության դեմ արշավանք է սկսում դեռ 1918 թ. և իր գինված ուժերն ափ է հանում Մուրմանսկում և Արխանգելսկում: Սակայն Անտանտի զինված ուժերի ու ինտերվենցիայի կենտրոնը դարձավ Հարավը և Ուկրաինան:

Դեռ 1917 թ. Անտանտն օգնում էր Կալեդինին և Ուկրաինայի կոնտրոսեվոլյուցիոն կենտրոնական Ռադային: Անտանտից հետ չի մնում նաև Ամերիկան, որը Կալեդինին բաց է թողնում հսկայական վարկեր: Ֆրանսիան և ապա Անգլիան պաշտոնական կապ են ստեղծում Ուկրաինայի կոնտրոսեվոլյուցիոն կենտրոնական Ռադայի հետ, իսկ 1918 թ. կեսերին Անգլիան իր բանակի մեծ մասը շարտում է Մեսոպոտայի և Անդրկովկասի ճակատները:

Արդեն 1918 թ. Ուկրաինան դառնում է Անտանտի ինտերվենցիայի և ներքին կոնտրոսեվոլյուցիոն ուժերի կենտրոն: Անգլոֆրանսիական իմպերիալիզմը լավ է հասկանում Ուկրաինայի և տնտեսական, և ռազմական-ստրատեգիական նշանակությունը:

«Հեռագրերը հաղորդում են,—գրում էր «Թայմսը»,—Արևելյան Ուկրաինայում և մասնավորապես Խարկովում ու Եկատերինոսլավում բոլշևիկյան ազդեցութեան աննկարագրելի աճման լուրերը: Ուկրաինայում գերմանական պահակազորքերը տեղական բնակիչներին կատաղի ու թշնամական վերաբերմունքի պատճառով քայքայվում են և անընդհատ պրոպագանդայի հետևանքով նրանց մի մասը միանում է բոլշևիկներին:

Միանգամայն հնարավոր է ու հավանական, որ շատ մոտ ապագայում և թերևս առաջիկա շաբաթներում, Ուկրաինայի ամբողջ շրջանները, նույնիսկ Արևմտյան Ուկրաինան Կիևի հետ միասին կանցնեն Մոսկվայի իշխանութեան [այսինքն՝ բոլշևիկները] գերիշխանութեան տակ: Կիևում կազմանների ղեկավարութեամբ նոր կառավարություն ստեղծելու վերաբերյալ հաղորդումները ոչ մի հիմք չունեն:

Բոլոր կոմպետենտ ղեկավարները, որոնք վերջին շրջանում եղել են Ռուսաստանում, բաժանում են այն կարծիքը, թե գերմանական բանակի էվակուացիայից հետո բուրժուական և ոչ մի կառավարություն չի կարող Ուկրաինայում դիմանալ թեկուզ մի շաբաթ»:

Անտանտի իմպերիալիստական խմբակները «գլխավոր թըշնամուն» —բոլշևիկներին խեղդելու համար դիմեցին բոլոր հնարավոր միջոցներին: Այդ նպատակին հասնելու համար նրանք ցանկացան և օգտագործեցին Գերմանիայի ուժերը:

Անտանտը, հաղթելով Գերմանիային, Փրանսիական գեներալ Ֆոշի առաջարկութեամբ նրանից պահանջեց թնդանութներ, զնդացիներ և առհասարակ ռազմական բոլոր միջոցները՝ բոլշևիկներին դեմ պայքարելու համար, սակայն, Գերմանիայի ներկայացուցիչ էրցբերգերը հայտարարեց՝

«Այդ դեպքում մենք կորանք, եթե մենք մեր ռազմական միջոցները հանձնենք ձեզ, այն ժամանակ էլ ինչպիսի պաշտպանություն գլխավոր թշնամուց —բոլշևիկներից: Դուք չեք հասկանում, —դիմում է նա Ֆոշին,—որ զրկելով մեզ պաշտպանողական բոլոր հնարավոր միջոցներից, դրանով իսկ դուք կործանելու էք և՛ մեզ, և՛ ձեզ»:

Գերմանիան նույնպես միացավ Անտանտին՝ «բոլշևիկներին ոչնչացնելու» համար:

«Եթե Գերմանիան,—գրում էր Լենինը,—մեր դեսպանին արտաքսեց Գերմանիայից, ապա նա այդպես վարվեց եթե ոչ անզրո-Փրանսիական քաղաքականութեան հետ անմիջականորեն համաձայնվելով, ապա ցանկանալով նրանց ծառայել, որպեսզի նրանք իր նկատմամբ մեծահոգութուն ցուցաբերեն: Մենք, իբր, նույնպես դահճի պարտականութունները բարեխղճորեն կատարում ենք բոլշևիկներին՝ ձեր թշնամիների նկատմամբ» (Լենին, հտտ. XXIII, էջ 268—269):

Քաղաքացիական պատերազմի առաջին շրջանն սկսվում է 1918 թ. գարնանից, երբ Սովետական իշխանութեան դեմ դուրս եկան ավստրո-գերմանական և ռուսական իմպերիալիստական լեգեոնները: Նրանց միացավ Ուկրաինական կոնտրոլուկուցիոն կենտրոնական Ռազան, իսկ գերմանացիները դուրս եկան այդ Ռազային օգնելու քողի տակ: 1918 թ. ապրիլ—մայիս ամիսներին զբաղեցրին ամբողջ Ուկրաինան, Ղրիմը, Բելուսուսիան: Դրանով չբավարարվելով, նրանք ձգտում էին Սովետական իշխանութեան կարել նաև Անդրկովկասը: Դրավիած տեղերում սկսվեց դաժան տեռոր, հոսեց բանվորների և աշխատավոր գյուղացիների արյունը: Չենքի ուժով կողոպտեցին, թալանեցին աշխատավորներից, արյուն մեղ խեղդելով առաջավոր ամեն մի խոսք, ամեն մի միտք: Արևելքում անզրո-Փրանս-ձապոնական իմպերիալիստները նույնպես հարձակում սկսեցին Սովետական երկրի վրա: Ապրիլի 5-ին Վլադիվոստոկում ափ իջավ ձապոնական դեսանտը, իսկ 1918 թ. գարնանը անգլիական դեսանտն ափ իջավ Մուրմանսկում: Մայիսի 25-ին, անզրո-Փրանսիական իմպերիալիզմի զրդամբ և էսերներին ու մենշևիկներին ակտիվ աջակցութեամբ, սկսվեց չեխոսլովակյան կորպուսի ապստամբությունը: Չեխոսլովակյան կորպուսը, որը բաղկացած էր մոտ 70—80 հազար հոգուց, մայիսի 25-ին գրավեց Նովոսիբիրսկը, մայիսի 29-ին՝ Պենզան, հունիսի 7-ին՝ Օմսկը, 8-ին՝ Սամարան, հուլիսին՝ Վլադիվոստոկը, Սիմբիրսկը, իսկ օգոստոսի սկզբին՝ Կազանը: Այն ժամանակվա բարդ պայմաններում այդ կորպուսի ապստամբությունը խոշոր վտանգ էր նորաստեղծ Սովետական իշխանութեան համար: Անտեսել այդ վտանգը, նշանակում էր կործանել Սովետական իշխանութունը, մանավանդ որ այն ժամանակ Սովետական իշխանութունից կարել էին նաև Պովոլոֆեն, Սի-

բիրը, Ուրալը, Հեռավոր Արևելքը, այսինքն այնպիսի երկրներ, որոնք տնտեսական, քաղաքական և ստրատեգիական խոշոր նշանակություն ունեին:

Այդ ծանր օրերին սկսվեցին նաև ներքին կոնսուլիդացիոն ելույթները (Կրասնոյ, Գուգոյ և այլն): Այդպիսով՝ նորաստեղծ Սովետական իշխանությունը թշնամիներով շրջապատված էր հյուսիսից, հարավից, արևելքից և արևմուտքից: Նա գտնվում էր ներքին և արտաքին թշնամիների կրակի օղակում:

«...Մենք գտնվում ենք պատերազմի մեջ, —ասում էր ընկեր Լենինը 1918 թ., հուլիսին, — և ռեվոլյուցիայի բախտը կվորոշվի այդ պատերազմի ելքով...» (Լենին, հատ. XXIII, էջ 161—162): Հասկանալի է, որ այդ ծանր դրությունից դուրս գալու, Սովետական իշխանությունը կործանումից փրկելու համար հարկավոր էր մեծ լարվածություն, կազմակերպվածություն, գործելու արագություն և վճռականություն:

Այդ վտանգը մեծանում և սաստկանում էր նաև նրանով, որ աղքատ, քայքայված, հյուժված երկրին սպառնում էր սովը՝ Սովետական իշխանության երկրորդ թշնամին:

«Սովը և հակահեղափոխությունը, —ասում էր Լենինը, — գալիս են ձեռք-ձեռքի տված»: Ծանր, շատ ծանր էր դրությունը: Զրկվելով Ուկրաինայից և Սիբիրից, Սովետական իշխանությունը զրկվեց հացի հիմնական բաղադրից: Սովի սարսափելի ուրվականը երևում էր ամենուրեք, նա հասել էր նաև այնպիսի քաղաքների, ինչպես Պետրոգրադն ու Մոսկվան: Բավական է ասել, որ «Մոսկվայի և Պետրոգրադի ամեն մի բանվորին երկու օրվա համար արվում էր մեկ ութերորդական զբաղմունքի հաց» («ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց», էջ 315):

Այդ ծանր և դժվարին օրերի մասին ռեվոլյուցիայի հանձարը, Մեծ Լենինը գրեց Պիտերի բանվորներին.

«Ազեաը մեր առջևն է, նա բոլորովին, բոլորովին մոտեցել է: Անչափ ծանր մայիսից հետո գալիս են էլ ավելի ծանր հունիսը, հուլիսը և օգոստոսը» (Լենին, հատ. XXIII, էջ 28, «Սովի մասին»):

Այդ ժամանակ էսերո-մենշևիկյան կոնսուլիդացիոն ուժերի միջոցով մի շարք կոնսուլիդացիոն ելույթներ ու

խուսալիցություններ կազմակերպվեցին Սամարայում, Սարատովում, Ցարիցինում, Ռիբինսկում և այլն: Ուժեղացավ կուլակությունների դիմադրությունը գյուղում, նրանք հացի պաշարներն սկսեցին ոչնչացնել, որպեսզի չհանձնեն Սովետական իշխանությանը: Ահա համառոտակի այն կացությունը, որի մեջ գտնվում էր նորաստեղծ Սովետական իշխանությունը 1918 թ. գարնանը, երբ մեծ երկրի դեմ սկսվեց ներքին ու արտաքին կոնսուլիդացիոն ինտերվենցիան: Բացառիկ դժվարին դրությունից դուրս գալու և ռեվոլյուցիան կործանումից փրկելու համար, քաղաքացիական պատերազմի առաջին էտապում վճռական ու ճակատագրական նշանակություն ունեցող Ցարիցինի պաշտպանությունը, որովհետև սրանով ապահովվելու էր ամբողջ Սովետական իշխանության պաշտպանությունը հարավ-արևելյան կողմից շարժվող կոնսուլիդացիոն ուժերի հարձակումից, և երկիրը փրկելու էր սովից:

Պարտիան և անձամբ ընկեր Լենինը հատուկ ուշադրություն դարձրին Ցարիցինի պաշտպանության վրա, նկատի ունենալով նրա տնտեսական ու ռազմա-ստրատեգիական խոշորագույն նշանակությունը Սովետական իշխանության համար պատմական այդ լուրջ էպոխայում: Ամենից առաջ երկրին հարկավոր էր հաց, առանց որի ոչինչ անել հնարավոր չէր, իսկ այդ ժամանակ հաց կարելի էր ստանալ միայն Ցարիցինի վրայով, քանի որ հացի մյուս շրջանները, ինչպիսիք էին Ուկրաինան, Սիբիրը, գտնվում էին ինտերվենյանների ձեռքում: Ցարիցինը, ունենալով հարմար աշխարհագրական դիրք (գտնվում է Վոլգա գետի աջ ափին), Հարավը կապում էր կենտրոնական քաղաքների՝ Մոսկվայի ու Պետրոգրադի հետ և դեռ հին ժամանակներից (պատմության մեջ Ցարիցինն առաջին անգամ հիշատակվում է 1589 թվին) հայտնի էր որպես առևտրի խոշոր կենտրոն: Այդտեղից Վոլգայի վրայով և երկաթուղով մեծ քանակությամբ ապրանք էր տեղափոխվում դեպի կենտրոնական Ռուսաստան: Առևտրի ամենազբաղված և առարկաներն էին՝ հացը, նավթը, անտառանյութը, ձուկը, աղը, մրգերը և այլն: Հաղորդակցության ճանապարհների միջխառնության արվյալներով, 1900 թվին Ցարիցինի բեռնաշրջանառությունը կազմել է 189 միլիոն փութ: Աստրախանից հետո, Ցարիցինն իր

բեռնաշրջանառութեան ծավալով երկրորդ տեղն էր բռնում մերձվորդայան քաղաքների շարքում: Պարզ է, որ այդպիսի մի կարևոր կետի կորուստը կնշանակեր բանվորական քաղաքները մասնել սովի, կնշանակեր նաև սեփույուցիայի կորուստ: Բացի դրանից, ծարիցիները որպես երկաթյա պատնեշ ընկած էր Դոնի ու արևելյան կոնտրոնեփույուցիոն ուժերի միջև և արգելում էր նրանց միանալու, ընդհանուր բռունցք կազմելու: Սովետական իշխանութեան դեմ: Եվ վերջապես, ծարիցիները բանվորական բոլշևիկյան այն կենտրոնն էր, որից շատ վախենում էին կոնտրոնեփույուցիոն ուժերը, առանձնապես Դոնի սովետակ-գովարդերականութեան ղեկավար զենեբալ Կրասնովը, որովհետև ծարիցիները լինելով պրոլետարական կենտրոն, սեփույուցիոնացնող ազդեցութեան էր գործում Դոնի կազակներին ստանիցաների վրա, համախմբում էր կազակութեան և գյուղացիութեան սեփույուցիոն շերտերը:

Ծարիցիների նշանակութեանը շատ լավ հասկանում էին նաև մեր թշնամիները, դրա համար էլ 1918 թվին նրանք իրենց ուշադրութեանը, իրենց պիտավոր ուժերը կենտրոնացրին այդ կետի վրա:

Նրանց նպատակն էր գրավել ծարիցիները, Վոլգայի վրա միանալ հյուսիս-արևելյան կոնտրոնեփույուցիոն ուժերին և Վոլգայից միացյալ ճակատով շարժվել Կարմիր Մոսկվայի վրա: Սովետական իշխանութեանը այդ ճակատից հարվածելու համար ջանք չէր խնայում նաև արտասահմանյան բուրժուազիան: Գնեբալ Կրասնովը օտարերկրյա իմպերիալիստներից ստացավ մեծ քանակութեամբ զենք, փող, սազմամթերք և այլն: Հենց իր՝ Կրասնովի խոստովանութեամբ և նրա հաշիվներով՝ առաջին մեկ և կես ամսում նրանցից ստացել է 11.651 հրացան, 46 թնդանոթ, 88 գնդացի, 109.104 թնդանոթի արկ և 11.594.721 հրացանի փամփուշտ:

1918 թ. մայիսից ծարիցիներն արգեն անմիջական վտանգի տակ էր: Սպանացող վտանգը նկատի ունենալով՝ ժողովրդական Կոմիսարների Սովետը մայիսի 3-ին որոշեց ռազմական դրութեան հայտարարել ծարիցիների շրջանի Տիխորեցկայա—Մարիցիներ, Տորգովայա—Ռոստով, Լիխայա—Մարիցիներ և Մարիցիներ—Բորիսովսկի երկաթգծերում: Մարիցիների դրութեանը դարձավ էլ ավելի կրիտիկական, երբ գերմանական իմպերիալիզմը, Դոնի կոնտրոնեփույուցիոն ուժերի հետ միասին, գրավեց Ռոստովը և նովոչերեկասկը: Դոնի Սովետական իշխանութեան օրգաններն

իրենց գինված ուժերով էվակուացիայի ենթարկվեցին դեպի Մարիցիներ: Էվակուացիան կատարվեց ընկեր Օրջոնիկիձեի անմիջական ցուցումով, որ այդ ժամանակ որպես Հարավային ճակատի արտակարգ կոմիսար, գտնվում էր Ռոստովում: Ընկեր Օրջոնիկիձեին գալով Մարիցիներ, տեսավ, որ ստեղծվել է չափազանց ծանր դրութեան—կոնտրոնեփույուցիոն խոտովութեան էր բռնկել քաղաքում: Նրա առաջին գործը եղավ ճնշել, լիկվիդացիայի ենթարկել խոտովութեանը և կարգ ու կանոն հաստատել: Եվ իրոք, ընկեր Օրջոնիկիձեին կարճ ժամանակում լիկվիդացիայի ենթարկեց խոտովութեանը և այդ մասին հաղորդեց ընկեր Լենինին: Սակայն խոտովութեան լիկվիդացիայով դրութեանը չէր փրկվում, ծանր օրերը դեռ առջևում էին: 1918 թվի մայիսի 23-ին սովետակ կազակները գրավեցին Չիր կայարանը, պայթեցրին Դոնի վրայի կամուրջը, բացառիկ դժվարին կապութեան ստեղծելով Կարմիր զորամասերի համար:

Մայիսի 23-ին ընկեր Օրջոնիկիձեին Մոսկվա, ընկեր Լենինին հեռագրեց հետևյալը.

«Իրութեանն այստեղ այնքան էլ լավ չէ: Հարկավոր են վճռական միջոցներ, իսկ տեղական ընկերները չափազանց փափկամորթ են, օգնելու ամեն մի ցանկութեան դիտվում է որպես միջամտութեան տեղական գործերին: Կայարանում կանգնած են հացով բեռնված 6 մարշրուտային գնացքներ Մոսկվայի համար և չեն ուղարկվում... Նորից եմ կրկնում, որ հարկավոր են ամենավճռական միջոցներ—Մարիցիների շուրջը կոնտրոնեփույուցիան մոլեգնում է» («Исторический журнал», 1938 թ. № 5, էջ 20):

Հենց այս ծանր դրութեանը, Մարիցիների տնտեսական, քաղաքական և ստրատեգիական կարևորագույն նշակակութեանը նկատի ունենալով՝ ընկեր Լենինն այնտեղ ուղարկեց ընկեր Ստալինին, մեր մեծագույն հաղթանակների կազմակերպչին ու ղեկավարին, որպես պարենավորման գործի ղեկավար՝ արտակարգ լիազորութեաններով:

«Ժողովրդական Կոմիսարների Սովետի անդամ, ժողովրդական կոմիսար Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը ժողովրդական Կոմիսարների Սովետի կողմից նշանակվում է Ռոսսաստանի հարավում պարենավորման գործի ընդհանուր ղեկավար, օժտված արտակարգ իրավունքներով: Տեղական և մարզային ժողովուսովետները, դեպուտատական սովետները, ղեկատները

շտաբները և պետերը, երկաթուղային կազմակերպութիւնները և կայարանապետները, գետային և ծովային առևտրական տորմիդի կազմակերպութիւնները, փոստ-հեռագրական և պարենավորման կազմակերպութիւնները, բոլոր կոմիտարները և էմիսարները պարտավորվում են կատարել ընկեր Ստալինի կարգադրութիւնները» — սովում էր ընկեր Ստալինի մանդատում, որն ստորագրել էր ընկեր Լենինը 1918 թ. մայիսի 31-ին:

Ընկեր Ստալինը Ճարիցին մեկնելուց մի քանի օր առաջ գրեց. «Սովետական իշխանութիւնն իրեն ողջ-ողջ թաղած կլինի, եթե նա մտքի վրայի չեն թարկի բոլոր, առանց բացառութեան բոլոր ուժերը կոնտրոլուցիոններին և սարկացնողներին հակահարված տալու համար:

Եվ այդ նա կանի»: («Պրավդա», № 108, 1918 թ. հունիս):

1918 թվին ղեկավարել Հարավային ճակատի պարենավորման գործը, այդ նշանակում էր ղեկավարել ամբողջ աշխատանքները, սովետական բոլոր տեսակի օպերացիաները, Ռուսաստանի Հարավային ճակատի պաշտպանութիւնը և, վերջապես, սովից փրկել Մոսկովան ու Պետրոգրադը: Ահա թե ինչու ընկեր Լենինն այդ ճակատն ուղարկեց ընկեր Ստալինին: Որ ընկեր Լենինը շատ մեծ նշանակութիւն էր տալիս Ճարիցինի պաշտպանութեանը, այդ երևում է նաև այն հատուկ կոչից, որ նա ուղղել էր բոլոր աշխատավորներին, ընկեր Ստալինի ճակատ մեկնելուց մի քանի օր հետո:

Ահա թե ինչ էր գրում ընկեր Լենինն այդ կոչում.

«Կոնտրոլուցիոններին կողմից Սիբիրյան երկաթուղու մի քանի հանգույցների գրավումը ժամանակավորապես կանգրդադանա, իհարկե, սովի մատնված երկրի պարենավորման վրա: Սակայն ուստական, ֆրանսիական, չեխոսլովակյան իմպերիալիստներին չի հաջողվի սեփուցիան սովահարութեամբ ձնչել: Սովի մատնված հյուսիսին օգնութեան և հասնում հարավ-արևելքը: Ժողովրդական կոմիտար Ստալինը, որը գտնվում է Ճարիցինում և այնտեղից ղեկավարում է Դոնի ու Կուբանի պարենավորման աշխատանքը, մեզ հեռագրում է հացի հակայական այն պաշարների մասին, որոնք նա հույս ունի մոտակա շաբաթներին ուղարկել հյուսիս» («Պրավդա», № 166, 1918 թ., հունիսի 11):

Ընկեր Ստալինը 1918 թ. հունիսի 6-ին երկու զրահապնացքով և մի խումբ կարմիր-զվարդիականներով ժամանեց Ճարիցին, լենինյան առաջադրանքով ինչ գնով էլ լինի, պահ-

պանել Ճարիցինը և ինչ գնով էլ լինի, հաց հասցնել երկրին: Հացը պետք է ստացվեր Հյուսիսային Կովկասից, Կուբանից, Դոնից: Սակայն հենց այդ շրջաններում էլ սկսած, մայիսի վերջերից և հունիսի սկզբներից, ուժեղանում էր վտանգը: Ինտերվենտներն ու սպիտակ-զվարդիականները գործում էին տենդոքին: Հաց շատ կար, սակայն այդ հացն ստանալ ղեկի Մոսկվա և Պետրոգրադ ուղարկել հնարավոր չէր, մինչև չլուծվեին սովետական խնդիրները: Ուրիշ խոսքով հացի համար մղվող պայքարը — դա միաժամանակ պայքար էր սոցիալիզմի համար, Սովետական իշխանութիւնն ինտերվենտներից փրկելու համար: Նախքան ընկեր Ստալինի Ճարիցին գալը, թշնամին ամենուրեք վխտում էր ոչ միայն քաղաքում, այլև նստած էր ղեկավարութեան մեջ: Նա գործում էր ազատ և անարգել: Այդ մասին ընկեր Վորոշիլովը գրում է.

«Ճարիցինն այդ ժամանակաշրջանում լիքն էր ամեն երանգի կոնտրոլուցիոններով, ալ էսերներից ու տեռորիստներից սկսած մինչև իսկական միապետականները: Մինչև ընկեր Ստալինի հայտնվելը և Ուկրաինայից հեղափոխական ջոկատների գալը, բոլոր այս պարտներն իրենց գրեթե ազատ էին զգում և ապրում էին սպասելով ավելի լավ օրերի»: (Վ. Ե. Վարշիլով — «Ստալինը և Կարմիր բանակը», էջ 10):

Պարզ է, որ կոնտրոլուցիոններին այդ սնմակը հանգիստ նստել չէր կարող և տենդոքին պատրաստվում էր ներսից պայթեցնելու քաղաքի պաշտպանութիւնը: Սակայն ընկեր Ստալինի գալուց հետո կարճ ժամանակամիջոցում դրութիւնը բոլորովին փոխվեց: Հայտաբերվեց կոնտրոլուցիոն մի գավազրութիւն՝ գեներալ Նոսովիչի ղեկավարութեամբ, որը ծրագրել էր ներսից գործել Ճարիցինի վրա հարձակվելու ժամանակ: Իավադրութեան հայտաբերումը և նրա ղեկավարների գնդակահարումը հսկայական չափով բարձրացրեց բանակի մարտունակութիւնը և ողբերից կարմիր-բանակայիններին: Այդ մասին «Солдат революции» թերթում գրվեց՝ «Ճարիցինում երևան է հանված սպիտակ-զվարդիականների մի խոշոր գավազրութիւն: Իավադրութեան աչքի ընկնող մասնակիցները ձերբակալված և գնդակահարված են: Իավադրիների մոտ գտնված է 9 միլիոն ուրբի: Իավադրութիւնն արմատից կտրված է Սովետական իշխանութեան միջոցառումներով:

Իավաճաններ, զգուշ:

Անողոք դատաստան է սպասում բոլորին և յուրաքանչյուրին, ով ռանձգություն կանի Սովետական բանվորագյուղացիական իշխանության դեմ» («Солдат революции», № 10, 1918 թ., օգոստոս 21):

Թշնամիները հետ անողոք դատաստան տեսնելուց հետո քաղաքում վերականգնվեց կարգ ու կանոնը, դիսցիպլինան: Այդ կատարվեց ընկեր Ստալինի գալուց հետո միայն:

«Ցարիցիների ֆիզիոնոմիան,—ասում է ընկեր Վորոշիլովը,— կարճ ժամանակի ընթացքում միանգամայն անճանաչելի դարձավ: Այն քաղաքը, որտեղ քիչ առաջ այգիներում թնդում էր երաժշտությունը, որտեղ փախած-հավաքված բուրժուազիան սպիտակ-սպառյալության հետ մեկտեղ բացահայտ կերպով խմբերով թափառում էր փողոցներում, այդ քաղաքը վեր է ածվում կարմիր ռազմական լագերի, որտեղ ամենախիստ կարգն ու ռազմական դիսցիպլինան իշխում են ամեն բանի վրա: Թիկունքի այս ամբաստանում անմիջապես իր բարերար ազդեցությունն է ունենում Փրոնտում մարտնչող մեր զնդերի արամազրություն վրա:

Հրամանատարական ու քաղաքական կազմը և ամբողջ կարմիրբանակային մասսան սկսում են ղգալ, որ իրենց կառավարում է մի ուժեղ ռեվոլյուցիոն ձևը, որը պայքարը վարում է հանուն բանվորների ու գյուղացիների շահերի, առանց խնայելու պատժելով ամենքին, ով հանդիպում է այդ պայքարի ճանապարհին» (Վ. Ն. Վորոշիլով—«Ստալինը և Կարմիր բանակը», էջ 13):

Ընկեր Ստալինը Ցարիցին հասնելուց հետո, բառացիորեն մի քանի օրվա ընթացքում մոբիլիզացիայի ենթարկեց բոլոր ուժերը, բոլոր հնարավորությունները՝ թշնամու դիմադրությունը կտարելու, նրան հետ շարժելու և կենտրոնական քաղաքները հասցով ապահովելու համար:

Հաց կար և այն էլ շատ կար Դոնում, Կուբանում, սակայն ամբողջ ծանրությունն ու դժվարությունն այն ուղարկելին էր: Յուրաքանչյուր փուլի հաց ուղարկելու համար պետք էր կատարել պայքար մղել կուլակության դեմ, կոնտրոլվելուցիոն կազակությունների դեմ: Պետք էր ծրագրված, մտածված պայքար մղել այդ խնդրի լուծման համար: Ընկեր Ստալինը Լենինին

ուղարկած (7—9 հունիս) առաջին հեռագրում պարզ և որոշակի նշում է հացի համար մղվելիք պայքարի միջոցառումները:

Այդ միջոցառումները հետևյալներն են. սահմանել հացի կայուն զններ և մոնոպոլիա, անխնա պայքար ծավալել սպեկուլյացիայի և գողերի դեմ, անխափան աշխատեցնել ջրային և երկաթուղային տրանսպորտը, սահմանել ամուր մթերային կարգապահություն և այլն: Հացի համար մղվող պայքարի գործում խոշոր նշանակություն ունեւր նաև ապրանքաշրջանառության ճիշտ կազմակերպումը: Հարկավոր էր գյուղին տալ անհրաժեշտ ապրանք (մանուֆակտուրա, տնային իրեր, գյուղատնտեսական գործիքներ և այլն): Եվ ընկեր Ստալինը հունիսի 9-ին ուղարկած իր հեռագրում մանրամասն թվում է այն իրերի անունները, որոնց կարիքն զգացվում է: Վերոհիշյալ միջոցառումների հետ միասին, ընկեր Ստալինը կազմակերպեց նաև բոլշևիկյան ազիտացիան բոլոր սեղերում (գործարաններում, սովետական մյուս հիմնարկներում և այլն): Մոսկվային և Պետրոգրադին հաց հասցնելու խնդիրը դարձավ յուրաքանչյուր բանվորի, սովետական յուրաքանչյուր աշխատողի պատվի գործը: Չնայ առնված միջոցառումները շատ կարճ ժամանակամիջոցում ավելցին իրենց փայլուն արդյունքները: Հունիսի 13—15-ին արդեն պատրաստ էր 500 հազար փուլի հաց, 1500 գլուխ անասուն՝ Մոսկվա ուղարկելու համար: Սակայն հունիսի 15-ին և 16-ին սպիտակ-կազակները, դերմանական ինտերվենցիոն ջոկատների հետ միասին վերցրին Ալեկսիևովո կայարանը, որը Ցարիցինը կապում էր Մոսկվայի հետ և, այդպիսով, այլևս հնարավոր չէր հացն այդ ճանապարհով ուղարկել, իսկ հացը պետք էր ուղարկել ինչ գնով էլ որ լիներ: Այդ հարցի լուծումն ապահովելու համար ընկեր Ստալինը որոշեց հացն ուղարկել Վոլգայով, որը դեռ ազատ էր: Չնայած խոշորագույն դժվարություններին, այնուամենայնիվ հացի առաջին 500 հազար փուլը Մոսկվան ստացավ: Հունիսի վերջին Մոսկվայի գլխը մաքրվեց թշնամիներից, և հաց ուղարկելու գործն առանձին թափ ստացավ: Հունիս ամսին Ցարիցինից Մոսկվա ուղարկվեց 2379 վագոն, այսինքն՝ ավելի քան երկու միլիոն փուլի պարեն: Ընկեր Ստալինի գալուց հետո այդ անում էր օրական 100 հազար փուլ:

Հուլիսի սկզբներին Ճարիցիների գրութունը դարձավ ավելի կրթաբեկական, ավելի լարված և վտանգավոր, որովհետև սպիտակ-կազակները և Դենիկինի «կամավորական» բանակը գրավեցին Տորգովայա—Վելիկոկոնյաժեսկայա—Կուբերև երկաթգիծը և, այդպիսով, Ճարիցիներ կարեցին հարավից՝ Կուբանից և Հյուսիսային Կովկասից, այսինքն հացի պաշարի հիմնական բազայից:

Չնայած հսկայական դժվարութիւններին, այնուամենայնիվ ընկեր Ստալինի եռանդուն ջանքերով շարունակվում էր հացի և այլ մթերքների առաքումը Մոսկվա: Այդ մասին ընկեր Ստալինը գրում է ընկեր Լենինին, «Քչում ու հայեցում եմ ամենքին, ում պետք է, հուսով եմ շուտով կլիբրականգնենք: Կարող եք վստահ լինել, որ չենք խնայի ոչ ոքի—ոչ մեզ, ոչ ուրիշներին, իսկ հաց այնուամենայնիվ կտանք»: (Վ. Ս. Վորաշիլով, «Ստալինը և Կարմիր բանակը», էջ 8):

Ընկեր Ստալինը կատարեց ընկեր Լենինին աված իր խոստումը: Հուլիսի 18-ին «Պրավդա»-ում ստվեց հետևյալ հաղորդագրութիւնը.

«Ճարիցիներ.—Մոսկվա է ուղարկված 39 վագոն պարենային բեռ, այդ թվում՝ 23 վագոն քուսպ, ալյուր և մակարոն, 3 վագոն չորացրած բանջարեղեն, 2 վագոն սուրճ» («Պրավդա», № 148, 1918 թ.):

Օրեցօր գրութիւնը ծանրանում էր: Ներքին և արտաքին կոնտրոսկոյուցիոն ուժերը ջանք չէին խնայում Ճարիցիներ գրավելու:

Մոսկվայում, Պետրոգրադում և բանվորական մյուս քաղաքներում սովը շարունակում էր համառ կերպով իրեն զգացնել տար: Սովետական Միութեան թշնամիները հարցը համարում էին սպառնալից, Ճարիցիների գրավումը նրանք սպառնոված էին համարում, և թվում էր, թե փրկութեան հույս այլևս չկա: Այդ ժամանակ ստեղծված ծանր գրութեան մասին վկայում է ընկեր Լենինի և ընկեր Ստալինի միջև ուղիղ հաղորդալարով տեղի ունեցած խոսակցութիւնը.

«...Պարենի մասին պետք է ասել,—հաղորդում է ընկեր Լենինը,— որ այսօր բոլորովին չեն տալիս ոչ Պրտեբում, ոչ էլ Մոսկվայում: Իրութիւնը միանգամայն վատ է: Հաղոր-

դեցեք՝ կարճ կը շատ պ միջոցներ ձեռք անեն, որովհետև, բացի Ձեզանից, ոչ մի տեղից չի կարելի ձարել: Յարոսլավում սպիտակների ապստամբութիւնը ճնշված է: Միմքիրսկն սպիտակների կամ չիսերի կողմից գրավված է: Սպասում եմ պատասխանի»:


Ընկեր Ստալինը պատասխանում է.

«Մի կերպ գիմացեք, ավեք միս և ձուկ, որ ձեզ կարող ենք ուղարկել առատորեն, մի շաբաթ հետո ավելի լավ կլինի Ստալին» («Ленинский сборник», XVIII, էջ 193):

Չնայած անասելի դժվարութիւններին, այնուամենայնիվ հացի և այլ մթերքների առաքումը Մոսկվային և Պետրոգրադին՝ շարունակվում էր: Այնպես որ մեր թշնամիների ջանքերը՝ խեղդել Սովետական իշխանութիւնը սովի ոսկրացած ձեռքերով, չհաջողվեց: Հացի Ստալինյան էշելոններն անխափան հասնում էին Մոսկվա, Պետրոգրադ: Երբեք չի կարելի մոռանալ, որ Ճարիցիների պաշտպանութիւնը—գա միևնույն ժամանակ սեփոյուցիայի պաշտպանութիւնն էր, գա միևնույն ժամանակ Պետրոգրադի և Մոսկվայի պաշտպանութիւնն էր: Այդ բանը շատ լավ էին հասկանում ուսուցիչայի թշնամիները, դրա համար էլ Ճարիցիների պաշտպանութեան ղեկավարութեան մեջ խճկել էին այնպիսի սրիկանների, ինչպես Նոսովիչն էր և նրա կոմպանիան: Իրանք, այդ ստոր դավաճանները, աշխատում էին հուզա Տրոցկու դավաճանական պլանով և Փրանսիական հրամանատարութեան ուղղակի ցուցումներով:

Ընկեր Ստալինի զլխավոր խնդիրներից մեկն էր՝ մաքրելով ղեկավարութիւնը կոնտրոսկոյուցիոններներից, քաղաքի պաշտպանութեան գործն ազահովել բուլշեկյան կազմերով: Հունիսի 23-ին, ընկեր Ստալինի առաջարկով, Ճարիցիների Ֆրոնտի հրամանատար նշանակվեց ընկեր Վորոշիլովը, որն այդ ժամանակ նոր էր եկել Իոնրասից, իր հետ բերելով Իոնի շախտյորներին, Լուգանսկի մետաղագործ բանվորներին և ուկրաինական նախկին 3-րդ և 5-րդ բանակների մի մասը: Երբ ընկեր Վորոշիլովն անցնում էր Իոնրասով, ճանապարհին նրան միացավ ուսուցիչոն կազակութիւնը, զլխավորապես Կամենսկայա և Մորոզովսկայա ստանիցաններից, ընկեր Երանտովիչը՝ հրամանատարութեամբ: Հետագայում այդ գործառնությունը կազմվեցին Ճարիցիների

20837-59



Ֆրոնտի երկու ամենամարտական զինվորները—Կոմունիստական զինվորական, որի կորիզը կազմում էին ընկեր Վորոշիլովի հետ եկած Լուզանսկի մետաղագործներն ու Դոնբասի շախտյորները, և Մորոզովյան-Դոնյան զինվորական:

Այդ զինվորականներից յուրաքանչյուրն ուներ ավելի քան 12 հազար սվին: Բացի դրանից՝ Դոնբաս—Ցարիցին ճանապարհին ընկեր Վորոշիլովի բանակին միացան այդ շրջանի բոլոր սևույուցիոն տարրերը, ահավոր ուժ գառնալով թշնամիների համար:

Ռազմական շտաբի փոխարեն ստեղծվեց ռազմական սովետ՝ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Այդպիսով, ընկեր Ստալինը, ընկեր Լենինի օգնությամբ, բանակի ղեկավարութունը մաքրելով կոնտրռեյուցիոններներից, ստեղծեց ամուր, բոլշեիկյան կարգ ու կանոն, իսկ այդ հնարավորութուն ավելի պլանովին ջախջախելու Ցարիցինի գրավմանը ձգտող թշնամուն, որը թվով մի քանի անգամ գերակշռում էր Ցարիցինի տակ գործող Կարմիր բանակին: Գեներալ Կրասնովը գերմանական իմպերիալիզմից հսկայական քանակությամբ մարդկային և ռազմական մատերիալ ստանալով՝ իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր Ցարիցինի շուրջը, և թվում էր, թե քաղաքը գտնվում է անկման նախօրյակին: Սպիտակ բանդաները գտնվում էին քաղաքից ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր հեռու: Հուլիսին կրասնովյան բանդաներն ընդհանուր հարձակում սկսելով՝ գրավում են Կարմիչինի, Բալաշովի, Կալաչի շրջանները: Հուլիսի 3-ից Կարմիր բանակն անցնում է ուժեղ հակահարձակման: Կարմիր զորամասերի համատեղ ճնշման տակ թշնամին ջախջախվեց և հետ շարվեց հեռու, դեպի Դոն: Ցարիցինի համար, հացի համար, Սովետական իշխանության համար մղված մարտերում, ինչպես նաև քաղաքացիական պատերազմի մյուս ֆրոնտներում ստեղծվեցին նոր մարտական միավորներ:

1918 թվին Ցարիցինի զինված ուժերը դասավորված էին հիմնականում երեք ուղղությամբ՝ Ցարիցին—Պովորինո (աջ թևը), Ցարիցին—Տիխոբրեցկայա (ձախ թևը), Ցարիցին—Լիխայա (կենտրոն) կայսրանների երկայնությամբ, այսինքն՝ Ցարիցինից դեպի հյուսիս, հարավ և արևմուտք: Օգոստոսի 20-ին հերոսական Կարմիր բանակը պաշտպանողական դրու-

թյունից անցավ վճռական հարձակման և գրավեց Օբլով—Կամեչևակա—Ռինսկը: Թշնամին իր հերթին անցավ հակահարձակման և իր ուժերը կենտրոնացնելով, օգոստոսի 21-ին հրետանային կրակով ուժեղացրեց Գուբրուկ կայսրանը: Ժուլովի տակ տեղի ունեցավ ուժեղ ճակատամարտ, որը տևեց 16 ժամ: Թեև այդ մարտում սպիտակները գրավեցին ժուլովը, սակայն նրանց հաջողութունը մասնակի և ժամանակավոր էր, իսկ ճակատի մյուս, ավելի վճռական մասերում հաղթութունը մնում էր Կարմիր զորամասերի կողմը:

Օգոստոսի 22-ին Կարմիր բանակը գրավեց Պիչուգան և Երզովկան: Օգոստոսի 23-ին ճակատի կենտրոնական մասում հարձակման անցան Կոմունիստական ու Մորոզովո-Դոնեցկայա զինվորականները և 25-ին գրավեցին Կարպովկան: Օգոստոսի 26-ին հյուսիսային ճակատի զորամասերը, ունենալով Կոմունիստական զինվորային աջակցութունը, վճռական հարձակման անցան և թշնամուն 18 կիլոմետր հետ շարտեցին Գուբրուկայից, իսկ այդ զիշերը գրավեցին նաև Կոստուբանը:

Հարվածն այնքան հանկարծակի և այնքան ուժեղ էր, որ սպիտակ-կազակները, մեծ քանակությամբ ռազմավթերք և պարեն թողնելով, սկսեցին խուճապահար նահանջել ամբողջ հյուսիսային ճակատից: Այդ ժամանակ Կոստուբանում էր գտնվում նաև Մամոնտովի շտաբը, որ նույնպես հարկադրված եղավ շտապ փախչել, թողնելով մեծ քանակությամբ ռազմական ավար և նույնիսկ շտաբի գրասենյակը: Մաքրվեց նաև Վոլգայի ճանապարհը, ընդհուպ մինչև Դուբովկա: Թշնամին հետ շարտվեց Ցարիցինից 30—40 կիլոմետր հեռու:

Կարմիր զորամասերի առաջխաղացումը դրանով չվերջացավ, ընդհակառակը, այն ավելի ծավալվեց և 10 օրվա ընթացքում, օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 1-ը, Դոնի ձախ ավին ամբողջպես մաքրվեց Կրասնովի բանդաներից, և թշնամին հետ շարտվեց ավելի քան 60—70 կիլոմետր Ցարիցինից հեռու: Կրասնովը Ցարիցինի վրա հարձակվելիս առաջ էր շարժվում օրական հազիվ 5 կիլոմետր, յուրաքանչյուր թիզ հողը գրավելով կովով, իսկ այդ նույն Կրասնովը Կարմիր բանակի հարվածների տակ փախչում էր օրական 15, հաճախ նաև 20 կիլոմետր:

Այդպիսով, Յարիցիները գրավելու համար սպիտակ-բանդա-
ների կատարած առաջին փորձը ձախողվեց: Այդ մասին ընկեր
Ստալինը ընկեր Լենինին ուղղած իր նամակում գրեց հետևյալը.

«Ճակատում մեր զորքերը լավ են ընթանում: Չեմ կաս-
կածում, որ էլ ավելի լավ են ընթանալու (կազակաթյունը
վերջնականապես քայքայվում է)» («Բոլշևիկ», № 2, 1938 թ.,
էջ 70):

Նույն նամակում ընկեր Ստալինը պարզ և որոշակի նշում
է առաջիկա հարձակման պլանը: Ինչպես միշտ, այնպես էլ
այժմ ընկեր Ստալինի ուշադրության կենտրոնում գտնվում
էին ամբողջ Հարավը և Կասպին: Իրա համար էլ նա խնդրում
էր ընկեր Լենինին՝ ուղարկել մի քանի հաա թեթև տեսակի
ականակիր և նույնքան սուզանավ: «Բազուեն, թուրքեստանը,
Հյուսիսային Կովկասը մերը կլինեն (անպայման), եթե անհապաղ
բավարարվեն պահանջները» — ամենայն վճռականությամբ
խնդիր էր գնում ընկեր Ստալինը, իր նամակը վերջացնելով
հետևյալ ջերմ խոսքերով.

«Սեղմում եմ թանկագին և սիրելի Իլիչի ձեռքը»:

Սակայն այդ նամակը դեռ չէր ուղարկվել, երբ հեռագիրը
Յարիցին բերեց Լենինի վրա կատարված մահափորձի ծանր
լուրը: Օգոստոսի 30-ին, երեկոյան, միտինգում արտասանած
ձառից հետո, էսեր տեոորիստկայի գնդակով ծանր վիրավորվում
է սեփույուցիայի հանձար Վ. Ի. Լենինը:

Ընկեր Ստալինի նամակն ընկեր Լենինը ստանում է բավա-
կան ուշացումով, որովհետև փոստային կապն այն ժամանակ
քայքայված էր: Լենինը, որ պառկած էր անկողնում, գրել
դեռ չէր կարողանում, ուստի, կարդալով ընկեր Ստալինի նա-
մակը, ջնջում է վերջին, անձնապես իրեն վերաբերող տողը,
նամակի առկ գնում է իր ստորագրությունը և հեռագրով հա-
զորգում Պետրոգրադ, որպես հրաման՝ բավարարելու ընկեր
Ստալինի պահանջը ականակիրներ և սուզանավեր ուղարկելու
մասին: Կարմիր բանակի հաղթական առաջխաղացումը շարու-
նակում է զարգանալ և ծավալվել: Սեպտեմբերի 7-ին ընկեր
Ստալինն շտապեց ուրախացնել ընկեր Լենինին, հաղորդելով
նրան հետևյալը.

«Յարիցիների շրջանի սովետական զորքերի հարձակումը

հաջողությամբ պսակվեց: Հյուսիսում գրավված է Իլովլյա կայա-
րանը, արևմուտքում՝ Կալաչը, էյպպիչևը, Դոնի կամուրջը,
հարավում՝ Ռեմաշկին, Նեմկովսկին, Դեմկինը: Հակառակորդը
գլխովին ջախջախված և շղթաված է Դոնի այն կողմը:

Յարիցիների գրությունն ամուր է: Հարձակումը շարունակ-
վում է: Ժողովը Ստալին» («Պրոլետարսկայա սեույուցիա», № 1,
1939 թ., էջ 161):

Կարմիր բանակի հաջողությունները հանգիստ չեն տալիս
նշ ներքին և նշ էլ արտաքին թշնամուն: Դավաճան Տրոցկին
և նրա կողմնակիցներն ամեն կերպ ձգտում են քայքայել
Ֆրոնտը, դիտմամբ ձգձգելով անհրաժեշտ ռազմանյութերի և զեն-
քերի առաքումը: Յարիցիների ֆրոնտի գրությունը չափազանց
վատացավ, ծանրացավ 1918 թ. սեպտեմբերի վերջերին և հոկ-
տեմբերի սկզբներին: Այդ մասին ընկեր Ստալինը հեռագրում է.

«Յարիցին, 1918 թվի հոկտեմբերի 2.

Ռեսպուբլիկայի Ռազմա-Ռեույուցիոն Սովետին

Պատճենը՝ ԳԼՆԿՈՄԻՆ

Պատճենը՝ ԼՆՆԻՆԻՆ

Պատճենը՝ ՍՎԵՐԴԼՈՎԻՆ

Իրությունը հարավային ճակատում անկայուն է դառնում,
նկատի ունենալով՝

1. Արկերի, փամփուշաների պակասը.

2. Զգեստավորում, հրացաններ չունենալը.

3. Ռեսպուբլիկայի Ռազմական Սովետի խոստացած
անհրաժեշտ սուզանավերը չուղարկելը:

Կազակները շարունակ նոր ուժեր են հավաքում Յարի-
ցիների դեմ... Սպանալից է դառնում հարավային ճակատի
գրությունը... իսկ Ռեսպուբլիկայի Ռազմա-Ռեույուցիոն Սովե-
տը, չտալով մեզ խոստացած մարտական նյութերը և սուզա-
նավերը, համառորեն լուում է: Հարավային ճակատի Ռազմա-
Ռեույուցիոն Սովետը հարկավոր է համարում հարցնել Ձեզ՝

1. Հարկավոր եք համարում արդյոք դուք՝ մեր ձեռքում
պահել Հարավը:

2. Եթե այո, կարճը եք արդյոք մատակարարել հարա-
վային ճակատի զորքերին այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է:

3. Եթե չեք կարող մատակարարել, հարկավոր չէ՞ արդյոք:

որ դուք ժամանակին հետ քաշեք զորամասերը որոշ ուղղու-
թյամբ՝ ճակատի կազմալուծումից խուսափելու համար:

4. Եթե դուք հարկավոր չեք համարում ձեր ձեռքում
պահել Հարավը, այդ ասացեք պարզ կերպով, քանի որ դրու-
թյան անորոշութունը կարող է խորտակել հարավային ճակատի,
հատկապես ցարիցինյան-հյուսիսային կովկասյան զորքերը:
Նկատի ունեցեք, որ Ցարիցինի սակ տիրող զրությունն ավելի
ու ավելի լուրջ է դառնում...

Հարավային ճակատի Ռազմա-Ռեկոլուցիոն Սովետի նախա-
գահ Ստալին» («Меликов—Героическая оборона Царицына
1918 г.», էջ 194—196):

Քանի գնում՝ զրությունը ծանրանում էր: Գեներալ Կրաս-
նովը նոր ուժերով դրոհի անցավ հարավային Ֆրոնտի վրա.
այսպիսով, սկսվեց Ցարիցինի պաշտպանություն երկրորդ՝ ամե-
նավճռական շրջանը: Ռազմամթերքների, թնդանոթների, հրացան-
ների խիստ պակաս էր զգացվում, կապը գոնովում էր անմխի-
թար վիճակում, և այս բոլորի հետ միասին հուզա Տրոցկին իր
անվերջ սխալ հեռազրերով ցանկանում էր խառնել գործը և
օգնել թշնամուն: 1918 թ. հոկտեմբերի 11-ին ընկեր Ստալինը
Մոսկվայից վերադառնալով և իրերի զրությանը ծանոթանալով՝
Սվերդլովին հազորվում է հետևյալը.

«Հենց նոր եկա Ցարիցին, վկայում եմ, որ մինչև օրս
չի ստացվել ոչ մի արկ, ոչ մի փամփուշտ, ճակատը սար-
սափելի զրություն է ապրում: Ինձ թվում է, որ մատակա-
րարման դադարեցումը պատահականություն չէ, որ ինչ որ
մեկի հմուտ ձեռքն աշխատում է Ցարիցինի հողին հանել, թե
հում է այդ ձեռնուտ, հասկանալը դժվար չէ: Հայտարարում եմ,
որ այդ հարցը առանց անհապաղ լուծման թողնելն անիմաստ
է, հանցանք է»: (Меликов—Героическая оборона Царицына
1918 г.», էջ 212—213):

Տեղում, ընկեր Ստալինի և ընկեր Վորոշիլովի ղեկավարու-
թյամբ մոբիլիզացիայի ենթարկվեցին բոլոր միջոցներն ու
հնարավորությունները: Չնայած, որ գործարաններն ու ֆաբ-
րիկաները 24 ժամ անընդհատ աշխատում էին Ֆրոնտի համար,
այնուամենայնիվ ուղղամթերքի խիստ պակասը մեծ վտանգ էր

սպառնում: Հոկտեմբերի 14-ին հակառակորդը խոշոր ուժերով
հարձակման անցավ Ցարիցինի Ֆրոնտի կենտրոնական և հյու-
սիսային ճակատներում: Մեր զորամասերն սկսեցին նահանջել:
Դրությունը կրիտիկական էր, վտանավանդ որ սաղմամթերք
չկար, արկ չկար, հրացան ու թնդանոթ չկար: Հոկտեմբերի 15-ին
տեղի ունեցան կառաղի կռիվներ: Հոկտեմբերի 17-ին ընկեր
Ստալինն ստորագրեց հետևյալ հրամանը.

«Հ Ր Ս. Մ Ս. Ն. № 112

Ցարիցինի նակատի գործերին

Գեներալներին և կարվածատերերի լիտի շայկան մեծ ուժեր
է քշում Ցարիցինի վրա:

Մեր պանծալի գիվիզիաները, մեր անեղ զրահապատ գնացք-
ները, մեր սովետական Կարմիր բանակը հաստատուն կերպով
հետ են մղում գեներալ-կազետական բանդաներին:

Սակայն գյուղացիական գնդի որոշ զորամասեր անցել
են ժողովրդի թշնամիների կողմը:

Դավաճանները նպատակին չհասան և սչնչացան մեր ու
կազետների խաշաձև կրակով, կազետներ, որոնք չհավատացին
դավաճանների ստորությանը և կրակ բաց արին նրանց վրա:
Դավաճանների գույքը բռնագրավվելու է գյուղացիական չքա-
վորության օգտին:

Հավերժ անարգանք դավաճաններին:

Փռուք անվեհեր կարմիր մարտիկներին:

Ռազմա-Ռեկոլուցիոն Սովետի անդամ՝ ՄՏԱԼԻՆ»: (Мели-
ков—Героическая оборона Царицына 1918 г.», էջ 222—223):

Ցարիցինի հերոսական պաշտպանությունը քայլ առ քայլ
հետևում էր ընկեր Լենինը: Ռազմական գործողությունների ամե-
նօրյա ամփոփագիրը հաղորդվում էր ընկեր Լենինին: Ընկեր
Լենինի պահանջով Ցարիցինին օգնության հասան նաև Մոսկ-
վայի բանվորները, որոնք հերոսությամբ կովեցին կարմիր
Ցարիցինի համար, Սովետական իշխանության համար:

Հակառակ դավաճան Տրոցկու և նրա արքայազանների կամ-
քի, ընկեր Ստալինի ղեկավարած բանակը գլխովին ջախջախեց
Ցարիցինի զրավմանը ձգտող թշնամուն և հետ շարտեց հեռու:

զեպի Դոն: Այսպիսով, լիկվիդացիայի ենթարկվեց Ցարիցինի երկրորդ շրջապատումը, որը, ըստ էության, լիակատար ոչնչացումն էր նաև կրասնովշչինայի:

Թշնամիների դեմ մղվող մարտերում ամբողջով, մարտունակ վարձավ Կարմիր բանակը: Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ կազմակերպվեց հերոսական 10-րդ բանակը, կարմիր հեծելազորը և այլն, որոնց անվան հետ են կապված մի շարք փայլուն հաղթանակներ: Ռազմական աշխատանքների ղեկավարման ու ծավալման հետ միասին, ընկեր Ստալինը հոգ էր տանում նաև մարտիկների, հրամանատարների քաղաքական գինովածությունների բարձրացման համար: Իրա համար ընկեր Ստալինը հսկայական քաղաքական-մասսայական աշխատանք կազմակերպեց զորամասերի բոլոր օղակներում: Ցարիցինի պաշտպանության ամենալարված բոլորին ընկեր Ստալինը հրաման տվեց «Солдат революции» թերթի հրատարակման մասին: Այդ փաստը վկայում է այն խոշոր ուշադրությունը, որ մեր պարտիան տալիս է գրավոր խոսքին: «Солдат революции» թերթը դարձավ կարմիր-բանակայինների մարտական ընկերը, նրանց մշտական բարեկամը:

«Солдат революции» թերթը զորամասերի բոլոր օղակներում, բոլոր մասերում քաղաքական-մասսայական լայն աշխատանք ծավալեց կարգապահության բարձրացման, առաջավորների փորձի փոխանակման, պարտիական և սովետական աշխատանքների լուսաբանման ուղղությամբ:

«Солдат революции» թերթի էջերից լավում էին պարտիայի, ընկեր Ստալինի, նրա մարտական գինակից ընկեր Վորոշիլովի խոսքերը, խոսքեր, որոնք կարմիր-բանակայիններին, հրամանատարներին և քաղաշխատողներին մարտի էին կոչում ոչնչացնելու ստոր թշնամուն, խոսքեր, որոնք հավատ էին ներշնչում զեպի հաղթանակը:

Երբ Ցարիցինի անկման վտանգն ուժեղացավ, «Солдат революции» թերթը գրեց,

«Ընկեր բանվորներ, գյուղացիներ, կազակներ: Աշխատավոր ժողովրդի թշնամին հարձակվում է բոլոր կողմերից՝ ներսից և դրսից, նրա դեմ պիտի գեները ձեռքին համախմբվեն

ամենահամարձակ և ազնիվ մարտիկները, բոլորը, օվքեր պատրաստ են մինչև վերջ գնալու աշխատավոր ժողովրդի հետ միասին, բոլորը, օվքեր պատրաստ են մեռնելու նրա հետ և նրա համար: Մի կորցնեք ոչ մի բալե, թշնամին ձեր խրճիթի շեմքին է:

Բոլորը ոտքի: Դեպի գեները»:

Ընկեր Ստալինը, չնայած լսիտ ծանրաբեռնված էր, բայց ժամանակ էր գտնում օղակու թերթի խմբագրին, գնում էր Ֆրոնտ, գիրքերում պառկած կարմիր-բանակայինների հետ զրուցում, ստորին օղակների հրամանատարներին կանչում էր իր մոտ և նրանց հետ զրուցում, խմանում նրանց կարծիքն այս կամ այն հարցի մասին, հոգում նրանց կարիքները և ցուցումներ տալիս: Այդ օրերի մասին ընկեր Վորոշիլովը գրում է.

«Ընկեր Ստալինի ղեկավարությունը կարիքնառով չի սահմանափակվում: Երբ անհրաժեշտ կարգը սահմանված է, կըր վերականգնված է հեղափոխական կազմակերպությունը, նա ուղևորվում է Ֆրոնտ, որն այդ ժամանակ ձգվում էր 600 կիլոմետրից ավելի երկարությամբ» (Վ. Ե. Վորոշիլով — «Ստալինը և կարմիր բանակը», էջ 13):

Շնորհիվ ընկեր Ստալինի բացառիկ ուշադրության, ագիտացիոն-մասսայական աշխատանքը Ցարիցինում գտնվում էր քաղաքական բարձրության վրա: Դա մի դպրոց էր, բոլշևիկյան կադրեր կոմիելու յուրահատուկ դպրոց: Ամուր ոտքերի վրա զրվեց նաև պարտիական աշխատանքը, մի բան, որ նախքան ընկեր Ստալինի գալը ուշադրությունից համարյա դուրս էր մնացել: Պարտիական կազմակերպությունն աճեց ի հաշիվ հին, փորձված բանվորների: Այնպես որ ավելի լավ գինված կոնսուր-ուկուցիոն ուժերին ջախջախելու համար մենք պարտական ենք նաև ստալինյան ագիտացիայի ուժին: Բոլշևիկյան ագիտացիան մեծ թափով և ծավալով տարվում էր նաև հակառակորդի թիկունքում: Այդ կազակցությամբ հսկայական զրահան դեր խաղաց Ռազմական Սովետի այն հրամանը (№ 39), որով արգելվում էր բռնություն գործադրել հակառակորդի բանակից մեր կողմն անցած գինվորների նկատմամբ: Այդ հրամանի լայն մասսայականացումը և նրա կոնկրետ կիրառումը հսկայական չափով բարձրացրին կարմիր բանակի հեղինակությունը, ցրե-

ցին այն ստոր ստերի ազգեցությունը, որ Կարմիր բանակի հասցեին թշնամին տարածել և տարածում էր աշխատավորության մեջ և սպիտակ զորամասերում:

Թե որ չափով բարձրացավ Կարմիր բանակի հեղինակությունը, այդ վկայում են այն բազմաթիվ նամակները, որ դրել են շարքային կազակները հակառակորդի բանակից:

Ահա այդ նամակներից մեկում մենք կարդում ենք.

«Շնորհակալ ենք ձեր քաջության համար, խնդրում ենք լինեք ավելի քաջ»:

Մի այլ նամակում ասված է.

«Մենք ձեզ սպասում ենք և խնդրում ենք գաք համարձակ և հայտնեք, որ օգնավորից ավելի շատ բրոշյուրներ պցեն: Մեզ մոտ գինյութների մեջ մեծ հուզմունք կա»:

Ընկեր Ստալինը գրեթե չէր քնում, չէր հանգստանում: Ամեն ինչ, բառացիորեն ամեն ինչ անձամբ էր ծրագրում, անձամբ ստուգում և իր ղեկավարութեամբ էլ իրագործում:

«Պետք էր տեսնել ընկեր Ստալինին այդ ժամանակ: Ինչպես միշտ, հանգիստ, խորասուզված իր մտքերի մեջ, նա, տառացիորեն ամբողջ օրերով չէր քնում, իր ամենաինտենսիվ աշխատանքը բաշխելով մարտական դիրքերի և բանակի շտաբի միջև» (Վ. Ն. Վարդաբախյան—«Ստալինը և Կարմիր բանակը», էջ 13):

Ճարիցիների համար մզվող ամբողջ պայքարը գլխավորելու հետ միասին, ընկեր Ստալինը ղեկավարում էր նաև սովետական, պարտիական աշխատանքը, ապահովում էր երկրին հաց մատակարարելու պատասխանատու գործը: Այդ օրերին Ճարիցիները կարևորագույն կենտրոն էր դարձել նաև մյուս ֆրոնտների աշխատանքները ղեկավարելու համար: Ընկեր Ստալինը Ճարիցիներում ստանալով և կատարելով ընկեր Լենինի հանձնարարությունները, իր հերթին ղեկավարում էր Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում տարվող աշխատանքները: Բազմից ընկեր Շահումյանը, Հյուսիսային Կովկասից ընկեր Օրջոնիկիձեն և ընկեր Կիրովը կապված էին ընկեր Ստալինի հետ և նրանից ստանում էին համապատասխան զերեկտիվներ: Չնայած հսկայական հեռավորությանը և կապի միջոցների վատթար դրությունը, այնուհամենայնիվ ընկեր Ստալինն ընկեր Լենինից ստանում էր ամենուրյա օգնություն ու ղեկավարություն, իսկ ինքն էլ իր հերթ

թին ցուցումներ ու խորհուրդներ էր տալիս ընկերներ Շահումյանին, Օրջոնիկիձենին և Կիրովին:

Այդ ժամանակվա փաստաթղթերում կարելի է կարգալ:

«Թանկագին ընկեր Շահումյան, հղում եմ լավագույն ողջույններ և ցանկություններ: Ստալինը Ճարիցիներում է: Նամակ ավելի լավ է գրեք Ստալինի միջոցով:

Բարևներ: Ձեր Լենին»:

(«Բոլևեիկ», 1938 թ., № 2, էջ 33):

Անհրաժեշտ ցուցումներ տալով ընկեր Ստալինն էլ իր հերթին ընկեր Շահումյանին գրում էր.

«Ամբողջ ասվածն ընդունե՛ք ոչ որպես իմ անձնական կարծիք, այլ որպես Լենինի առաջարկը, որի հետ երեկ բոլոր շոշափված հարցերի մասին ես խոսել եմ ուղիղ գծով» («Բոլևեիկ», 1938 թ., № 2, էջ 33):

Մարտական Կարմիր բանակն ընկեր Ստալինի և ընկեր Վորոշիլովի ղեկավարութեամբ գլխավորին ջախջախեց գեներալ Կրասնովի բանդան:

«Չնայած երկրի ծանր դրությունը և Կարմիր բանակի երիտասարդ լինելուն, բանակ, որը դեռ չէր կարողացել ամբապլենդել, շնորհիվ պաշտպանության համար ձեռք առնված միջոցների, արդեն առկա էին առաջին հաջողությունները: Գեներալ Կրասնովը հետ մղվեց Ճարիցիներից, որի դրավումը նա ապահովված էր համարում, և քշվեց Դոնի մյուս կողմը» («Համ Կ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց», էջ 309):

Սեպտեմբերի 10-ին կայացավ հաղթանակ տարած կարմիր զորամասերի միտինգ: Ռազմական շտաբի շենքին առաջինը մտեցավ Լուզանսկի Կոմունիստական առաջին գունդը: Ընկեր Ստալինը ողջունելով կարմիր-բանակայիններին, գնդի հրամանատարին հանձնեց կարմիր դրոշ հետևյալ մակագրությամբ. «Հյուսիսային Կովկասի ռազմական օկրուգի զինվորական խորհրդից—մարտերում ցույց տված քաջությունների համար»:

Իր պատասխան ճառում գնդի հրամանատարը երդվեց բարձր պահել այդ դրոշը և համարձակ առաջ գնալ ունյուցիայի պաշտպանության համար, բանվոր դասակարգի գործի հաղթանակի համար: Այնուհետև ամբիոնին մոտենում է Սիվերսկի ռեկրահական ռեվելյուցիոն գունդը, որին նույնպես ողջու-

ներով՝ ընկեր Ստալինը հրամանատարին հանձնում է կարմիր զորք: Ռեուլուցիոն գնդերին զրոշներ են հանձնվում նաև Ցարիցինի պարտիական կոմիտեից:

Միտինգից հետո կարմիր-բանակայինների համար արվում է համերգ: Ընդմիջումին ճառով հանդես է գալիս ընկեր Վորոշիլովը, որը հենց այդ զորամասերի հետ միասին անասելի դժվարություններ հաղթահարելով՝ Դոնբասից անցել էր Ցարիցին, իր հետ բերելով կոփված բոլշևիկներ, բանվոր դասակարգի զործին նվիրված աշխատողներ: Ընկեր Վորոշիլովը թվելով հաղթահարված խոշորագույն դժվարությունները, հիշեցնում է, թե այդ բոլորը հաղթահարեցինք, որովհետև մենք գիտեինք, «... Որ եթե մենք միանանք Դոնում և Վոլգայում ապրող մեր եղբայրների հետ, ապա ուսուցչի անպարտելի կլինի: Սակայն մենք մինչև Վորոսլոնովը եղած տարածությունը գիտեցինք սփռելով՝ շերերացինք, չվհատվեցինք, այլ մեր մեծ խնդրի լիակատար գիտակցությամբ շարունակեցինք մեր ճանապարհը, բազմիցս դաժան և արյունալի մարտի բռնվելով՝ թշնամու հետ և սվինով մեզ համար ճանապարհ բանալով» («Պրոլետարիստական Կուրյուցիա», 1939 թ., № 1, էջ 104):

«Ես հպարտանում եմ, — վերջացնում է իր խոսքն ընկեր Վորոշիլովը, — որ գտնվում եմ այսօր քաջարի, հերոսական ռեվոլյուցիոն զորքերի շարքերում: Կոնտուպից ես եկել եմ ձեզ հետ միասին (փոթորկալից ծափահարություններ) և ձեզ հետ միասին էլ շարունակելու եմ կոխվել մինչև վերջ» («Պրոլետարիստական Կուրյուցիա», 1939 թ., № 1, էջ 105):

Քաղաքացիական պատերազմի պատմության մեջ Ցարիցինի պաշտպանությունը հանդիսանում է ամենաաչքի ընկնող էջերից մեկը: Եվ հասկանալի է, թե ինչու: Ավելի լավ հազնըված, թվով մի քանի անգամ գերազանցող թշնամին ջախջախվեց ու հետ շարտվեց:

Ընկեր Ստալինը ժողովրդին ոտքի հանեց հայրենական պատերազմի՝ ընդդեմ արասասհմանյան ինտերվենտների, ընդդեմ ներքին ու արտաքին կոնտրեռեվոլյուցիայի: Եվ մեծ Ստալինի ղեկավարությամբ, Կարմիր բանակն ու աշխատավոր ժողովուրդը կռվեցին և այդ կռիվը վերջացավ աշխատավորների օգտին, բանվոր դասակարգի օգտին: Թշնամին, որ շատ էր ուրախանում, շատ էր հպարտանում իր թվական գերազանցությամբ, իր

զենքերով, իր հանդերձանքով ու լավ սննդով, խայտառակ կերպով պարտվեց և հետ շարտվեց:

Սովետական Միության ժողովրդն իր ազատության համար պայքարելու սքանչելի օրինակ ցույց տվեց, իսկ այդ պայքարը ղեկավարում էին ընկեր Լենինը և ընկեր Ստալինը: Ցարիցինի ֆրոնտում ընկեր Ստալինի անձնական օրինակը ոգևորեց մարտիկներին, հրամանատարներին և քաղաշխատողներին: Ընկեր Ստալինը հաղթանակ էր բերում ամենուրեք, որտեղ երևում էր: Ցարիցինն այն ամբողջն էր, որին դարնվելով ջարդ ու փշուր եղան կոնտրեռեվոլյուցիոն գնեթաշների, պարոնայք կապետալիստների բոլոր ուժերը:

Քաղաքացիական կռիվների ընթացքում և հատկապես կարմիր Պետրոպոլի պաշտպանության գործում կատարած անձնուրաց աշխատանքի համար 1919 թ., ընկեր Լենինի նախաձեռնությամբ, Համ. ԿԳԿ-ն ընկեր Ստալինին պարգևատրեց Կարմիր Իրոշի շքանշանով:

«Մահացու վտանգի ընդդեմ, — ասված է Համառուսաստանյան Կենտր. Գործկոմի որոշման մեջ, — երբ թշնամիների նեղ օղակով ամեն կողմից շրջապատված Սովետական իշխանությունը հետ էր մղում թշնամու հարվածները, այն բուռն, երբ բանվոր-գյուղացիական ռեվոլյուցիայի թշնամիները 1919 թվի հուլիսին մոտենում էին կարմիր Պիտերին և արգեն գրավել էին Կրասնայա Գորկան, Սովետական իշխանության համար այդ ծանր ժամին ՀԿԳԿ-ի նախագահության կողմից մարտական պոստի վրա նշանակված Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ջուղաշվիլին (Ստալին) իր էներգիայով, անխոնջ աշխատանքով կարողացավ համախմբել Կարմիր բանակի երկրված շարքերը:

Նա ինքը մարտական գծի շրջանում լինելով՝ մարտական կրակի տակ անձնական օրինակով ոգևորում էր Սովետական ռեվոլյուցիայի համար պայքարողների շարքերը»:

Այս բոլորից հետո մտում է պարզել, թե ինչու հաղթեց Կարմիր բանակը՝ ոչ միայն Ցարիցինի ֆրոնտում, այլև քաղաքացիական պատերազմի բոլոր ֆրոնտներում, չէ՞ որ թշնամին ավելի լավ էր հազնված, ավելի լավ էր զինված, թվով գերազանցում էր և այլն: Այդ հարցի պատասխանը մենք կարդում ենք «ՀամԿ(բ)ի պատմության համառոտ դասընթացում», ահա այն.

«1. Կարմիր բանակը հաղթեց այն պատճառով, որ Խորհրդային իշխանության քաղաքականութիւնը, հանուն որի պատերազմում էր Կարմիր բանակը, ճիշտ քաղաքականութիւն էր, որը համապատասխանում էր ժողովրդի շահերին, այն պատճառով, որ ժողովուրդը գիտակցում ու հասկանում էր այդ քաղաքականութիւնը, որպէս ճիշտ, որպէս իր սեփական քաղաքականութիւնն և մինչև վերջը պաշտպանում էր այդ քաղաքականութիւնը:

Բոլշևիկները գիտեին, որ այն բանակը, որը պայքար է մղում հանուն սխալ քաղաքականութեան, որին չի պաշտպանում ժողովուրդը, չի կարող հաղթել: Հենց այդպիսի բանակ էր ինտերվենտների և սպիտակ-գվարդիականների բանակը: Ինտերվենտների և սպիտակ գվարդիականների բանակն ունեւր ամեն ինչ՝ և՛ հին փորձված հրամանատարներ, և՛ առաջնակարգ սպառազինութիւն, և՛ ազամամթերք, և՛ զգեստ, և՛ պարենամթերք: Պակասում էր մի բան՝ Ռուսաստանի ժողովուրդների օժանդակութիւնն ու համակրանքը, որովհետև Ռուսաստանի ժողովուրդները չէին ուզում և չէին կարող աջակցել ինտերվենտների ու սպիտակ-գվարդիական «կառավարողների» հակաժողովրդական քաղաքականութեանը: Եվ ինտերվենտների ու սպիտակ-գվարդիականների բանակը պարտութիւն կրեց:

2. Կարմիր բանակը հաղթեց այն պատճառով, որ նա հավատարիմ և մինչև վերջը նվիրված էր իր ժողովրդին, որի համար էլ ժողովուրդը սիրում և օգնութիւն էր ցույց տալիս նրան, որպէս իր հարազատ բանակին: Կարմիր բանակը ժողովրդի զավակն է, և եթէ նա հավատարիմ է իր ժողովրդին, ինչպէս հավատարիմ զավակն իր մորը, նա կվայելի ժողովրդի օժանդակութիւնը, նա պետք է հաղթի: Իսկ իր ժողովրդի դեմ ընթացող բանակը պետք է պարտութիւն կրի:

3. Կարմիր բանակը հաղթեց այն պատճառով, ով Խորհրդային իշխանութեանը հաջողից ամբողջ թիկունքը, ամբողջ երկիրը ոտքի հանել և ի սպաս դնել ուղիւստի շահերին: Առանց ամեն կերպ ուղիւստի աջակցող ամուր թիկունքի, բանակը դատապարտված է պարտութեան: Բոլշևիկներն այդ գիտեին և հենց այդ պատճառով նրանք երկիրը վերածեցին ուղիւստի լազերի, որը զենք, ուղիւստի, զգեստ, պարենամթերք, լրացումներ է մատակարարում ուղիւստի:

4. Կարմիր բանակը հաղթեց այն պատճառով, որ՝ ա) կար-

միր-բանակայինները հասկանում էին պատերազմի նպատակներն ու խնդիրները և գիտակցում էին դրանց ճիշտ լինելը. բ) պատերազմի նպատակների ու խնդիրների ճշտութիւնը գիտակցելը նրանց մեջ ամրապնդում էր զիսցիպլինայի ոգին և մարտունակութիւնը. գ) այդ պատճառով կարմիր-բանակային մասսաները թշնամիների դեմ մղվող պայքարում շարունակ ցուցաբերում էին անօրինակ անձնուրացութիւն և չտեսնված մասսայական հերոսութիւն:

5. Կարմիր բանակը հաղթեց այն պատճառով, որ Կարմիր բանակի թիկունքի ու ձևակառուցիկ կազմար կորիզը բոլշևիկներին կուսակցութիւնն էր—միասնական՝ իր համախմբվածութեամբ ու զիսցիպլինայով, ուժեղ՝ իր հեղափոխական ոգով և ընդհանուր գործի հաջողութեան համար ամեն տեսակ զոհաբերութիւնների զիմելու իր պատրաստակամութեամբ, չգերազանցված՝ միլիոնավոր մասսաներին կազմակերպելու և բարդ պայմաններում նրանց ճիշտ ղեկավարելու իր հմտութեամբ:

«Միմիայն շնորհիվ այն բանի,—ասում էր Լենինը,—որ կուսակցութիւնն արթուն պահակ էր կանգնած, որ կուսակցութիւնը խիստ զիսցիպլինայի էր ենթարկված, և այն պատճառով, որ կուսակցութեան հեղինակութիւնը միացնում էր բոլոր գերատեսչութիւններն ու հիմնարկները, և հենակումի տված լողունով մի մարդու պէս գնում էին տասնյակ, հարյուրավոր, հազարավոր և վերջին հաշվով միլիոնավոր մարդիկ, և միայն այն պատճառով, որ չլաված չափով զոհեր տրվեցին,—միմիայն այդ պատճառով կարող էր տեղի ունենալ այն հրաշքը, որը կատարվեց: Միմիայն այդ պատճառով, չնայած Անտանտի իմպերիալիստների և ամբողջ աշխարհի իմպերիալիստների երկու, երեք և չորս անգամվա արշավին, մենք ի վիճակի եղանք հաղթելու» (Լենին, հատ. XXV, էջ 96):

6. Կարմիր բանակը հաղթեց այն պատճառով, որ՝ ա) նա կարողացավ իր շարքերում կոփել նոր տիպի այնպիսի ուղիւստի կան ղեկավարներ, ինչպիսիք են Ֆրունզեն, Վորոշիլովը, Բուզյոնին և ուրիշները. բ) նրա շարքերում կոփում էին այնպիսի բնածին հերոսներ, ինչպիսիք են Կատովսկին, Չապայեվը, Լա-

զոն, Շչորսը, Պարխոմենկոն և ուրիշ շառերը: Գ) Կարմիր բանակի քաղաքական լուսավորութեամբ զբաղվում էին այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Լենինը, Ստալինը, Մորոտովը, Կալինինը, Մվերգլովը, Կազանովիչը, Օրջոնիկիձեն, Կիրովը, Կուլեշչևը, Միկոյանը, Ժգանովը, Անդրեյեվը, Յարոսլավսկին, Չերժինսկին, Շչադենկոն, Մեխլիսը, Խրուշչևը, Շվեբնիկը, Շկիրյատովը և ուրիշները: Գ) Կարմիր բանակն իր կազմում ունեւր այնպիսի երևելի կազմակերպիչներ ու ագիտատորներ, ինչպիսիք էին զինվուցական կոմիսարները, որոնք իրենց աշխատանքով ցեմենտում էին կարմիր-բանակայինների շարքերը, արմատացնում էին նրանց մեջ դիսցիպլինայի ու մարտական քաջարութեան ու գին, եռանդագին, արագ ու անողոքաբար կասեցնում էին հրամանատարական կազմի առանձին անձերի զավաճանական գործողութունները և, ընդհակառակը, համարձակորեն ու վրձուականորեն պաշտպանում էին կուսակցական ու ոչ կուսակցական այն հրամանատարների հեղինակութունն ու համբավը, որոնք ցույց էին տվել իրենց նվիրվածութունը Խորհրդային իշխանութեանը և ընդունակ էին հաստատ ձեռքով առաջ տանելու Կարմիր բանակի գործառնների ղեկավարութունը:

«Առանց զինկոմի մենք Կարմիր բանակ չէինք ունենա» — ասում էր Լենինը:

7. Կարմիր բանակը հազթեց այն պատճառով, որ սպիտակ-զվարդիական բանակների թիկունքում, Կոլչակի, Դենիկինի, Կրամնովի, Վրանգելի թիկունքում գործում էին ընդհատակում կուսակցական և ոչ կուսակցական հիանալի բոլշևիկներ, որոնք բանվորներին և գյուղացիներին, ապստամբութեան էին բարձրացնում ընդդեմ ինտերվենտների, ընդդեմ սպիտակ-զվարդիականների, խարխուլում էին Խորհրդային իշխանութեան թշնամիների թիկունքը և գրանով իսկ հեշտացնում էին Կարմիր բանակի առաջխաղացումը: Բոլորին հայտնի է, որ Ուկրաինայի, Սիբիրի, Հեռավոր Արևելքի, Ուրալի, Բելուռուսիայի, Պոլոլոժեի պարտիզանները, որոնք թուլացնում էին սպիտակ-զվարդիականների և ինտերվենտների թիկունքը, անգնահատելի ծառայութեան են մատուցել Կարմիր բանակին:

8. Կարմիր բանակը հազթեց այն պատճառով, որ Խորհրդային իշխանութեանը միայնակ չէր սպիտակ-զվարդիական

հակահեղափոխութեան և օտարերկրյա ինտերվենցիայի դեմ իր մղած պայքարում, որ Խորհրդային իշխանութեան պայքարը և նրա հաջողութուններն առաջ էին բերում ամբողջ աշխարհի պրոլետարների համակրանքն ու օգնութեանը: Այն ժամանակ, երբ իմպերիալիստները փորձում էին ինտերվենցիայով ու բռնկազայով խեղդել Խորհրդային հանրապետութեանը, այդ իմպերիալիստական երկրների բանվորները Խորհուրդների կողմն էին և օգնում էին նրանց: Այն պայքարը, որը մղում էին նրանք Խորհրդային հանրապետութեան թշնամի երկրների կապիտալիստների դեմ, նպաստեց այն բանին, որ իմպերիալիստներն ստիպված եղան հրաժարվել ինտերվենցիայից: Անգլիայի, Ֆրանսիայի և ինտերվենցիային մասնակցող այլ երկրների բանվորները գործադուլներ էին կազմակերպում, հրաժարվում էին բեռնել ինտերվենտներին ու սպիտակ-զվարդիական զենքերաչներին օգնութեան ուղարկվող սազմամթերքը, ստեղծում էին «գործողութեան կոմիտեներ»՝ «Ձեռներդ հեռու Թուսաստանից» լողունգով:

«Հենց որ, — ասում էր Լենինը, — միջազգային բուրժուազիան ձեռք է բարձրացնում մեզ վրա, նրա ձեռքը բռնում են իր սեփական բանվորները» (Լենին, հատ. XXV, էջ 405):

(«ՀամԿ(բ) կուսակցութեան պատմութեան համառոտ դասընթաց», էջ 329—332):

* *

Նախկին հետամնաց, անկուլտուրական Յարիցինը վաղուց Սովետական Միութեան առաջավոր, ինդուստրիալ քաղաքների շարքն է մտել: Հսկայական չափով աճել է նաև ազգաբնակչութեանը: Այն զեպքում, երբ 1902 թվին Յարիցինն ունեցել է 67.650 հոգի ազգաբնակչութուն, 1939 թվի տվյալներով 445.476 հոգի է, կամ 1926 թվի հետ համեմատած աճել է 294,1 տոկոսով:

1925 թվին ՍՍՌՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի որոշմամբ Յարիցինը վերանվանվեց Ստալինգրադ: Այն ժամանակվանից սկսած Յարիցինը (Ստալինգրադ), Սովետական Միութեան խոշորագույն արդյունաբերական կենտրոններից մեկը, պատվով կրում է մեր մեծ առաջնորդի՝ ընկեր Ստալինի փառապանձ անունը:





« Ազգային գրադարան »



NL0411205

A white rectangular label is affixed to the bottom right corner of the dark green cover. It contains the Armenian text « Ազգային գրադարան » (National Library) at the top, a standard 1D barcode in the middle, and the alphanumeric code NL0411205 at the bottom.

9668 1 П.

Х. ДАШЕЛИЯН

ОБОРОНА ЦАРИЦЫНА

*(Материалы Педагогического Института
для заочников)*

Изд. Пед. Института, Ереван, 1950 г.